ԹԻՒ ԽԱ· 41· ՇՐՋԱՆ Զ· 1878 ՏԱՐԻ Ե· ՓԵՏՐ· 11 ՇԱԲԱԹ

ԱԶԳԱՑԻՆ

ՀԱՑՔ

ԵՒ

ՀԱՅԱՍՏԱՆ

Պատմութեան մէջ երևցած ժողովրդներէն ամենէն խելօն և ողորմելին Հայ ժողովուրդն է, և աչխարհացոյց տախտակին վերայ նշանակուած երկիրներէն ամենէն լքեալ, անխնամ և անպաշտպան մնացողը Հայաստան աչխարհն է։ Երբ ևս ժամանակ մի իւր օրինաւոր իչխանութիւնն ու բարեկարգ օրէնքներն ունէր, իւր ներքին բնակիչներն ամեն ապահովութիւն կ'վայելէր և արտաքնոց ալ վախնալէ աչխարհ մի էր, բայց պէտք է որ բարբարոս Թուրքիոյ Տէրութեան կրօնականները ի վեր ամեն տեսակ դժբաղդութեանց ենթակայ կ'գտնուի։

Շատ ժողովուրդներ տեղերնին նեղ գալուն և շահ չըլլալուն համար ուրիշ երկիրներ գաղթելու կամ պանդխտութիւն ընելու կ'հարկադրուին. բայց Հայոց պանդխտութիւնն կամ գաղթականութիւնն այս կարգէն չէ։ Հայաստանի հողն արգաւանդ է և Հայ ժողովուրդն ալ չափէն աւելի աչխատասէր. և եթէ իւր քրտինքը վրան չեռք բերածներն իրեն մնար, մեծ հարստութիւն մի պիտի դիզէր այս ժողովուրդն և գաղթելու կամ պանդխտելու պատճառ չպիտի ունենար։ Հայը վայրենի ցեղերէ կ'գրկուի, իր հայրենահարսն և շատ անգամ իրենց տասը-

ուած քով կեանքերնին ալ վրայ տալերնուն հա-
մար, պարտաւորած են այսր անդր գաղթել
իրենց գահճայ ներկայութենէն նողկանք և զըզ-
ուանք խմնալով, և չատերն ալ այսր անդր
պանդխտել դէմ իրենց նիւթական կորուստն
լեցնելու, այսինքն՝ իւր ընտանիքն հայրենեաց
մէջ ըլլել, թողուլ և պանդխտութեան մէջ օտա-
րին համար աշխատիլ։

Իրաց այս ցաւալի և արդահատանաց
արժանի վիճակին մէջ թող չ'զարմանայ
աշխարհ թէ՝ Հայ ազգն օտար ազգաց հե-
ռուն յարաբերութեան մտնելու միջոց չէ դը-
տած, վասն զի գժոխըմիւթը տառապանքներէ
աչք բացած չունի, և իւր ձեռքի հացին պա-
տառն դէռ բերանն չ'տարած՝ օտարն ձեռքէն
կ'խլէ։ Այս կացութեան մէջ Հայուն համար
յարաբերութեան մ'ըլլ միտիայն մնացած է իւր
Ս. Եկեղեցին. բայց սա ալ թոշ որ օտարներու
հետ բարեկամական յարաբերութիւնները չէ
կրցած դադրացնել, այլ մինչև իսկ իր Աղբին նը-
կատմամբ պայծառ և որոշ դաղափար մի չունի։
Հետևաբար մէկ երկրի մը մէջ Հայուն կրած
վիշտերն, ուրիշ երկիր մը բնակող Հայուն մե-
ծաւ մասամբ պիտի ըսենք գաղտնի մնացած է.
Ռուսահայն չգիտեր թէ Թուրքիոյ Հայուն քան
ցաւն ինչ է. Թուրքիաբնակ Հայն ալ չգտեր թէ
Պարսկահայն ինչ կ'քաշէ. Պարսկահայն ալ Հընդ-
կահայուն վերայ տեղեկութիւն չունի, Հնդկա-
հայն ալ Բոմպէյեցի Հայուն [illegible] չգիտեր. վերջապես ամեն տեղ այս վիճակին
մէջ է մեր Աղբը։

Օտար ազգաց հետ բարեկամական և մե-
տերիմական յարաբերութիւններ դոյացնելու դըժ-
կամութեան մէկ պատճառն ալ Մամուխն է, որ աշխատու-
հայ դէպքերն, անցքերն և ուրիշ տեղեկութիւն-
ներ վտանգաւոր երարու կ'հաղորդէ։ Թէև
Հայկական Մամուխն ալ ընդարձակ ասպարէզ մի
ունենար իւր առջև և իւր Աղբին ցաւոց և վըշ-
տաց ճշդիւտ պատկերն աշխարհի ներկայացնել
եթէ Մոսկուայ Գազետայ կամ Սմերիկայի մէջ գը-
րիչ ունենար. բայց քանի որ Ռուսիոյ և Թուր-
քիոյ մէջ խոսք ձայն մի ունին՝ այլև այլ նկատ-
մունք չեն թողուլ գրել ինչ որ իրական է, և
զանց ընել ինչ որ երևակայական։ Այսօր Ռու-
սիոյ Հայ Մամուխն՝ իւր ցաւերն ձածկելով
Թուրքիոյ Հայուն ցաւերն կ'նկարագրէ առանց
անոնց չափն և բուն պրկիւրն դիտնալու. Թուր-
քիոյ Հայ Մամուխն ալ՝ իւր ցաւոց ծանրութիւնն
բարեխառնելով՝ Ռուսիոյ Հայուն վիճակն յա-
ռաջ կ'բերէ առանց դոհացուցիչ հմտութիւն մի
ունենալու։

Հպատակ թերթեր՝ քաղաքականութեան
նեղ շրջանին մէջ՝ բնականաբար ամէից յառաջ
չեն կրնար անցնիլ, սակայն հետաքրքրութեամբ
կ'դիտենք թէ մեր ցաւոց ոչ ճշմարիտ թարգ-
ման պիտի հանդիսանայ ներկայ պարտագրիչ
մէջ, որք ապստամբ ժողովրդոց օշարակ կ'մատ-
ուռակեն, և անմեղ հպատակ Հայ ժողովրդեան
բաժակ մի՝ թոյն կ'երկնցնեն։ Մեք այդ ժողո-
վըրդոց ազատութիւն և առանձնաշնորհումներ
որուելուն երբէք չենք նախանձիր. մինակ մեզ
ցաւ եղած է թէ ինչու այդ քաղաքակրթու-
թեան օժիտներն Հայն ալ հաւասարապես չ'վա-
յելէ. մանաւանդ երբ նկատողութեան առ-
նունք թէ Հայն առանց հետաքրքրութեան այն ժողովուրդ-
ներէն աւելի իրաւունք ունի և կարօտ է, և
թէ Սրևելեան լնդդոյն երեսէն միշտ Հայաս-
տան կրկես կ'դառնայ և շատ բնակութիւններն
հրոյ սրոյ ճարակ կըլլան։

Այսօր Ռուսիա՝ այն Քրիստոնէութեան ա-
խոյեանն, որ Հայ ժողովուրդը թշուառացուց և
դէպատան արեամբ ողողեց, Անգլիոյ և Աւս-
տրիոյ ապահովութիւնները կրնայ անոնց չահե-
րուն չզպչելու. Անգլիա և Աւստրիա ալ մէջերը-
նին բանակցութիւններ կընեն ծրագրերը կը
պատրաստեն՝ ներկայ պատերազմին երեսէն՝ ի-
րենց չահուն վնաս մը չպատճառելու համար։
Իգալիա իւր աղդեցութիւնն ընդարձակելու
համար զօրեղ դաշնակիցներու հետ կ'միանայ.
Ամէնայ Գանֆերանսն մէջ մնանել կուզէ՝ կրեսէն
ու Թեսաղոնիկին դիւրութեամբ ձեռք ձգելու
համար և ապստամբ իշխաններն ու ժողովուրդ-
ներն ալ ի ընդհոն Ռուսիոյ մեծ որսեր ձեռք կը
ձգեն։ Այս ամենն ապէկ, բայց ի'նչու համար
այս ամենուն համար միայն Հայը տուժէ, որուն
խօսքը բնաւ չ'կայ։

Ժուրնալ Տը Ս. Բեդերսպուրկ, որ կողչաբո-
գի բերանն կ'համարուի, հաշտութեան նախա-

պայմաններէն հրաժարական էր, որոց մէջ ալ դժբաղդաբար Հայուն և Հայաստանին համար բան մը չկայ։ Թէ և այս պայմաններն ալ ըստ մեզ թէրի ըլլալով չենք կրնար մեր իրաւանց հիմն բռնել, սակայն Արեւելեան խնդրոյն վերջ բաւական լոյս մի սփռելով Հայոց բոլոր յոյսերն կ'ջրեն։ Ըհ, այս է եղեր մեր ճակատագիրըն ըսելով տեղերնին նստինք, թէ մեր կարողութեան չափովն որչափ ձայն ունինք բարձրացընենք և բողոքենք Ռուսիոյ դէմ որ առաջարկեալ ընդհանուր բարեկարգութեան պայմաններն ժխտելով, խորհրդական առանձնաշնորհումը ներով կուզէ լուծել և վերջ տալ Արեւելեան խնդրոյն՝ ի վնաս Հայոց Ազգին և Հայաստանի։

Այո՛ մեզ մի քիչ աւելի պարզենք։ Թուրքիոյ տէրութեան տարեկան դանձն 24 միլիոն ոսկի եկամուտ ունէր, ինչպէս որ Պեռլինի մարդիկներն՝ Սուլթան Աբդիւլ Ազիզի օրով օտար թէրթերու միջոցաւ վկայած էին գաղտնի ծանուցագրով մի, եթէ Ռուսիա իւր խորհրդական առաջարկութիւններն գործադրէ, բնականաբար այդ եկամուտն 10 միլիոնի պիտի իջնայ։ Այս եղանակաւ դանձուն հաւասարակշռութիւնն բոլորովին պիտի խանգարի. Թուրքիա ոչ իւր հին պարտուց տոկոսներն պիտի կրնայ վճարել և ոչ ալ պատերազմական տուգանքն հատուցանել, և ես եռանդագին այս լաբիւրինթոսէն ելլելու համար, Տաճկին և Հայուն պիտի դիմէ։ Բայց տունք որ 400 դրչէն ոսկի կառնուն և այնքան բան քաղաքական թռուլ կառնան, ան միայն աւելի բան մը, այլևայն իսկ առջի տուածներն ալ չ'պիտի կրնան հատուցանել, մանաւանդ Հայաստանի Հայ ժողովուրդն, որ վայրենի ցեղերու ճիրաններու մէջ միշտ կ'կեղեքի և իւր օրագահիկն հանելու անգամ կարողութիւն չունի։

Այս տեսակետով ամեն ուշիմ անձինք կրնան իմաստասիրել թէ ո՞ր պիտի հասնի Հայոց վիճակն ու գառնագէտ հեռանկարներն։ Շատերն իրենց բնակութիւնները թողլու պիտի պարտաւորին, շատերն օտար երկիրներ պիտի գաղթեն, մնացեալներն ալ նիւթական և բարոյական թշուառութեան մրուրն մինչև յատակն քամելու պիտի պարտաւորին և Հայաստան ալ աւեր անապատ մի պիտի դառնայ։ Եթէ Ռուսիա առանց այդ խորհրդական առանձնաշնորհումներուն՝ ընդհանուր բարեկարգութեան սկզբունքն ընդունէր, զոր Օգոստափառ Սուլթանն ալ առաջարկեց, թերևս Հայաստանն և Հայ ժողովուրդն ալ անցեալ և ապագայ աղետներէն աղատելով, բարեկիրթ և բարեկեցիկ ապրելու միջոց և ժամանակ գտնէր։

Ներկայ քաղաքական չարժումներէն յայտնապէս կ'տեսնուի որ ամեն ազգերու քիչ շատ պաշտպանութիւն և օգնութիւն կայ, և ամեն ազգ իւր խիկարն կուլայ, մեր Ազգն ալ որ դուրսէն պաշտպան և օգնութիւն չունի, անտարբեր կենալու չէ և ներկայ պարադաններէն օգուտ քաղելու է իւր Ազգն ու Հայրենիքն փրկելու։ Պատրիարք Երջանկ. Հայրն, մանաւանդ Ազգաւոհան նախամեծար Մայր Ամիռայ ամենայն Հայոց Վեհաշնորհ Կաթուղիկոսն, որ եկեղեցւոյ և Ազգ. իրաւանց աւանդապահն է, անշուշտ գիտեն Հայաստանի վիճակն և հոն բնակող Հայոց թշուառութիւնն, ժամանակն է որ Ազգին արդար դատն իւր իսկութեամբն աշխարհի ներկայացնեն առանց նկատման։ Վերջըն ծածկելով աւելի կ'զայրացնայ և մինչև իսկ մահ կ'պատճառէ, մենք բժիշկներու դիմելու ենք, դեղ և դարման ընելու ենք, իսկ եթէ դարձեալ չդիմենք, այն ժամանակ Աստուածիմարձակ խլչերնուս վերայ տանելով կրնանք ասել թէ՝ այս է եղեր յաւիտենական Նախախնամութեան կամքն, որ Հայերն միշտ թշուառապրին։

ՀԱՅՆ

Տփղիս Մեղու Հայաստանի տարեցոյց Ցուն վար առնոյ առաջին թուոյն մէջ երևցած ուշադրութեան արժանի հետևեալ յօդուածն մեր ընթերցողաց ալ հաղորդել արժան համարեցինք։

«Անցած և 1877 թուականը, մի տարի էլ գլորվեցաւ յաւիտենական անդունդը Հայի համար սովորական ընթացքով, վշտալից և թշուառ։ Սովորական ենք ասում, որովհետև այլ մի առանձին դարձ Հայ ազգի կեանքի համար տեղի չունեցաւ։ Նոյն վիշտերը, նոյն նեղու-

թիւնք, ինչ որ 500 տարի չարունակ կրում էր, կրեց և անցեալ տարի, թէ աղքատութեամբ, թէ հալածանքով և թէ դաղթականութեան թշուառութիւններով։ Աւաւմ են ի՞նչու Հայը չէ ապատամբում Տաճկի դէմ և պատերազմ մը՝ ղուսմ, որ Եւրոպան տեսնէ թէ նա էս ունի ձգտումն դէպի ինքնագլխութիւն, աղատութիւն։ Մեթէ կարելի է մի ազդից աւելի մեծ պատերազմ պահանջել, քան այն, որ Հայ ազդը Ասիոյ մէջ մղել է 500 տարի չարունակ, երբև երբեմնապ և երբև ինքնագլխութիւնը պաշպանող ազգ, բռնութեան, ադխատութեան, կրօնական մոլեռանդութեան և հալածանաց դէմ։ Վրդովմամբ են Եւրոպայի ազդերն, որոնցից մեկը՝ Ռուսը միշտ անգամ սուրը հանել է և պատերազմ է մղում Տաճիկների դէմ, որովհետև Սբ. Լաւն մի քանի ազդեր ազատագրելով կորցրել են պատերազմներում մի քանի հազար հոգի։ Դա ոչինչ է Հայ ազդի պատերազմի հետ համեմատելով, պատերազմի, որ նա մղել է 500 տարի արիւն և քրտինք թափելով և բազմաթիւ միլիոններից չորս հինգ միլիոնի չափով։

«Սա չէ բոպէական դրդռումից, յափշտակութիւնից կամ կամակորութիւնից առաջացած պատերազմ, այլ դիտակցական և անօրինակ տոկունութեամբ մղած պատերազմ է ինքնապահպանութեան համար։ Այս ծանր և երկարատև պատերազմը դրեթէ անօրինակ է պատմութեան մէջ։ Դա ցոյց է տալի Հայ ազդի անընկճելի բնաւորութիւնն, անհամեմատ չնչաքը իւր ազգութիւնն և քրիստոնէական կրօնը պահպանելու համար, որ առ հաւատչեան է նորա ապագայ պիտանաւորութեան թէ իւր և թէ ընդհանուր մարդկութեան համար։ Եթէ ըստ ամենայնի եւրոպան հանդէս է եկել Տաճկաստանի ճնշեալ ազդերին ազատելու համար և նորա ինքնագլխութեան իրաւունքը ճանաչեցնել տալու, միթէ Տաճկաստանի քրիստոնեայ ազդերից կա՞յ մինն, որ աւելի կարօտ և արժանի լինի օգնութեան, քան Հայ ազգն իւր անցեալ 500 ամեայ դառն պատերազմով։ Հայի պատերազմն առանց չափի և ազազակի է եղել, առանց ղէնքերի չառաչման, որովհետև եղել է պատերազմ անղէն մարդու ամենաառեսակ ղէնքով զինաւորված թշնամու դէմ, լռիկ, ինքնիկ, ան դադաերում, այլ աների պատերի մէջ, մեռնողը թաղվել է իւր օճախի աւերակների տակ և եկեղեցիների մէջում, ապա սեղանների առաջ զոհվելով աղդութեան և կրօնի համար։ Եթէ Հայ նահատակների անուննները բոլորը արձանագրելու լինէին, բազմահատոր խոշոր գրքեր կ'կազմէին։

«1877 Թուականը, կարծես, Հայի համար մի առանձնայատկութիւն մ'այն ունեցաւ, նա մի լոյս ձգեց նորա անցեալ լռիկ պատերազմի վերայ. նորա ազդութեան համար ցոյց առած տոկունութիւնն և զոհած նահատակները, կարծես, հանդէս եկան և երևեցան Եւրոպացիների աչքերին, այդ անդին նահատակների հառաչանաց ձայները լսելի եղան խուլ ականջներին։ Այսպէս ենք ասում, որովհետև երբ պատերազմ բացվեցաւ, յանուն Տաճկաստանի Քրիստոնեայ ճնշեալ ազդերի ազատութեան, թէ Եւրոպայում և թէ Ասիայում—Պլեւնայի և Ղարսի չուրջը արձակվող ազատութեան թնդանօթների որոտմունքն, որոնք արձագանք են ազդութեան նահատակների հառաչանաց ձայների, լսելի եղան Եւրոպական ազդերի ականջներին և ահա սոքա աւելի դիտակցաբար և ճշդութեամբ քննելով Տաճկաստանի Քրիստոնեից անցեալ և ներկայ վիճակը, յիշեցին Հայերին ևս թէ ազատութեան արժանի ազդերի։ Հարկ չկայ այս տեղ յիշելու այն ամենն, ինչ որ թէ արևմտեան Եւրոպայի զանազան ազդերի և թէ Ռուս լրագրներուն մէջ խօսվեցաւ Հայ ազդի վերաբերութեամբ, մեծ մասամբ համակրութեամբ և կարեկցութեամբ, որովհետև այն ամենը դրեթէ ծանօթ է Մեղուի ընթերցողներին սրա անցեալ տարուան համարներից։

«Այս 1877 Թուականն, գուցէ աւելի դատնութեամբ անցնելով Հայ ազդի համար, մի լոյս ցցեց նորա վիճակի վերայ Եւրոպացւոց առաջ և մի յոյս ծագեցրեց Հայ ազդի համար, սրա վաղուց որնած փրկութեան, դէպի որը ձգտում է 500 տարի ամեն բան զոհելով արիւն և քրտինք։

«Այս է Հայի համար անցեալ 1877 Թուականը։ Այլ թէ այդ տարուան առկայծակ լոյսը ի՞նչ կերպարանք կստանայ, կերազործվի՞ նա։

թէ էլի յոյսը կ'ընեայ Հայ ազգի համար և սա էլի ստիպված կ'լինի շարունակելու իւր դարաւոր պատերազմն աւելի զօրեղ միջոցներով լուսաւորութեամբ և դիւանագիտութեամբ՝ աւելի զօրեղ թշնամիների դէմ— այդ ցոյց կ'տայ ներկայ պատերազմի վերջն և եւրոպական դեսպանաժողովի անդառնալի վճիռը »։

Հայրենիքի վերջին թուոյն մէջ կ'կարդանք «Սեպհիսկէի զօրանոցը հասատատեալ 23ի չափ Ռուս զերիները որոց ամէնքը բացի ի մէկէն՝ Ղարապաղցի Հայ են եղեր, իսկ միւսը Ռուս։ Երկու շաբաթ առաջ Գասը դիւղի քարոզիչ Սըրուանձտեանց Գերդ. Տ. Գարեգին Ծ. վարդապետի այցելութիւնն ընդունելով հոգևորապես մխիթարուելէ և խոստովանուելէ վերջը, Կիւրակի օր ամենքն ալ Գասը դիւղի Հայոց եկեղեցին երթալով հաղորդուեր և յետ աւարտման եկեղեցւոյ Թաղ. խորհրդոյ անդամոց ձախքովը փառաւոր ճաշ մը ըրեր են։ Սոյն Հայազգի գերիները ամեն կիրակի եկեղեցի յաճախելու արօրնութիւն առացեր են »։

* * *

Կիմանանք թէ այս երեկոյ Ռօտոսթօի նորընտիր Առաջնորդ Գերաշնորհ Տ. Ներսէս Սրբազան Գէորգեան, որոյ իմայրաքաղաքս ժամանումն նախընթաց թուով յանուցած էինք, կ'մեկնի իւր հովուական վիճակն։ Աներկբայ ենք թէ՝ Նորին Սրբազնութիւնը իւր յանուցեալ խոհականութեամբն և հեզահամբոյր կենցաղավարութեամբը պիտի սիրաշահէ տեղւոյն ամեն կարգի ժողովրդեան սրտերը, և վիճակին յառաջդիմութեան, բարւոյն և զարգացման համար չը պիտի խնայէ իւր աշխատութիւնն, և եթէ տակաւին Ռօտոսթօի վիճակին յետադիմութեան և յուզմանց աւելի եղող անհանգարտ բնոյթ ունեցողներ ալ կան՝ եղբայրաբար կ'յորդորենք զիրենք հնուի մնալ հակառակաւորութենէ և պատճառ չըլլալ ժողովրդեան թշուառութեան։

Նոյնպէս Պալը-Փեսերի նորընտիր Առաջնորդ Գերդ. Տիմոթէոս Ծ. վարդապետ Սահրիչեան, որ մի քանի շաբաթէ ի վեր իւր վիճակին գործոց կարգադրութեան համար ի մայրաքաղաքս եկած է, Նորին Գերապատուութիւնն ալ մեծ օրէն պիտի մեկնի Իպանտրմա և անտի Էտրինճիկ և Հայոց դիւղ այցելելէ յետոյ, պիտի վերադառնայ ուղևորիլ ի Ս. Էջմիածին ընդունիլ զեպիսկոպոսականն աստիճան։

* * *

Տրապիզոնի վիճակին Գաւառ. կրօն. և քաղ. ժողովները իրենց Առաջնորդ Գեր. Մատթէոս Ծ. վարդապետ Նաղարեանցի բազմամեայ ծառայութիւններն և վաստակն՝ հոգևորական վարձատրութեան արժանի գտնելով մեծաւոր հանրադրութեամբ մի իրենց խղճէն ներկայացուցած են բարձր. Պատրիարք Սրբազան Հօր։

Գեր. Մատթէոս Ծ. վարդապետի այլ և այլ վարած Ազգ. պաշտօններն ու աշխատութիւնքն կ'ըսելով սոյն կոչման արժանաւոր կ'գտնենք. հաւատի ենք թէ՝ այս հոգևոր վարձատրութեամբն աւելի ոգևորեալ պիտի կրկնապատկէ իւր ջանքերն իւր հովուական խնամոց յանձնեալ հօտին միաբանութեան, սիրոյ, խաղաղութեան յառաջադիմութեան և զարգացման համար։

* * *

Լրագիր Թերթն իւր երեկուան 610 թուով լուր մը հրատարակած է, իբր թէ վեհ. կաթուղիկոսէ դիր մ' եկած է առ Ամեն. Սրբազան Պատրիարք Հայրն հրաւիրելու զինք յԷջմիածին քաղաքական այցելութեան մը համար ևընն ևըն։

Ըստ հրամանի Ամեն. Սրբազան Հօր կը փութամ ներկայիս յայտարարել թէ այդպիսի դիր մը ոչ եկած է և ոչ Լրագրին տուած վերոյիշեալ լուրը։

10 Փետր. 1878 Դիւանապետ
ի Պարբերի Հայոց Կ. Պոլիս Թովմաս

Ա Զ Դ

Եչնի-Գաբուի Հայկանոյշ վարժարանի աշակերտուհեաց անցեալ Յունվ. ամսոյ մէջ պատրաստած ձեռագործոց մէկ մասին վիճակահանութիւնը որ վաղը կիւրակէ պիտի կատարուէր, տոմսակաց մեծ մասն մնացած ըլլալուն՝ պարտաւորած ենք թողուլ յառաջիկայ կիւրակէ աւուր։

Ընդհանրութեան հանուած վիճակահանութեան տոմսակաց թիւն 250 հատ են իւրաքանչիւրն երեք դահեկանի արժողութեամբ, յորոց 15 թիւն միայն պիտի շահի։

Տոմսակները կ'ծախուին Ս. Առաքելոց եկեղեցւոյ բանկալը և մանչ տղոց Վարժարանի մէջ։

ՄԱՀԱԳՈՅԺ

Բիւրքճիպաշլեան Աղնուաշուք Գերդաստանն՝ անցեալ Ուրբաթ օր՝ ցաւալի կորուստ մի ըրաւ։

Բարեյիշատակ Մեծ. Բիւրքճիպաշլի Մկրտիչ էֆէնտի Թօգաթլեանի լծակից՝ Առաքելուհի Տիկին Ալէմ, ընդերկար անկողնոյ ծածկելէ ետև՝ բնութեան անդառնալի հարկին առջև խոնարհեցաւ՝ իր բարեկամներն, Աղգականներն և մանաւանդ բարեբողոքի որդիքն և թոռունքը համակելով ի սուգ ծանրաթախիծ։

Կիւրակէ օրը մեծաւ շքով և պատուով կատարեցաւ Հանդուցեալին յուղարկաւորութեան ծէսերը Հանդէսն ի Մայր Եկեղեցւոյ, ուր ներկայ էին՝ Բարձրաշնորհ Ս. Պատրիարք Հայր, երեք Եպիսկոպոսունք, չորս վարդապետք, երեսուն չափ Քահանայք, բաւական թիւով երգեցիկ մանկունք՝ ժողովրդեան մեծ բազմութիւն մի և մինչև իսկ բարեկիրթ և պատուաւոր օտարազգիք, որք ինքնայորդոր գնութեամբ էին առաքինի Հանդուցեալին վերջին հրաժեշտը պատուել և մեծարելու։ Պատրիարքական դադարեալ Փոխանորդ Հայրապատիս Տ. Յովհաննէս Սրադ-Քահանայ Մկրեան Ս. Պատարագ մատոյց ի յիշատակ հոգւոյ Հանդուցեալին. և Դեր. Եղնիկ Ծ. վարդապետ Սպահունի ալ ոգեշունչ դամբանականաւ մի գովեց Հանդուցեալ Տիկնոջ հաղուագիւտ և անբասիր կեանքն, բարեպաշտական և մայրական պարտուց ճանաչումն և՝ ուրիշ կենսական և ոգեկան առաքինի հիրքերը։

Յաւարան Եկեղեցական արարողութեանց, Հանգուցեալին մարմինն ամփոփեցաւ Բեզայի Ֆէրի-Գիւղի Աղգ. դերեզմանատունը։

Տիկին Բիւրքճիպաշեան, որ Աղգին մեկնանոց շարքին մէջ փառաւոր և վսեմ տեղ մը ունի, իւր հեղահամբոյր բնաւորութեամբն, առաքինական բարեգործութիւններովն, աղքատասիրութեամբն և ծնողական պարտուց ճանաչմամբն օժտեալ ճշմարիտ Հայ մը և ճշմարիտ մայր մի էր։ Մեկ ձեռքովն եկեղեցիներն և վարժարանները կ'զարդարէր ու կարօտելոց թշուառութեան արցունքերն կ'չնչէր, իսկ միւս ձեռքովն՝ Աղգային անբիծ դաստիակութեան մէջ կ'խնամարկէր Բիւրքճիպաշլեան ամբողջ բարեկիրթ Գերդաստանն, ուրկէ խիստ չատերն Աղգ. այլ և այլ պաշտամանց մէջ անձանձիր և անձնուիրաբար ցարդ Աղգին ծառայութիւններ կ'մատուցանեն, բազմիցս նիւթական և բարոյական զոհողութիւններ չխնայելով ազգասիրաբար։

Սրդարև մեծ կորուստ, զի այսպիսի մայր մը շատ ուշ կ'պատրաստի Աղգին, այս առթիւ մեր վշտակցութիւնն յայտնելով, յաւելտենական երանութիւն կ'մաղթենք Հանգուցեալին և իւր սգազգեաց Գերդաստանին՝ երկնային մխիթարութիւն կ'հայցենք։

. . . Հայր Խմբագիր

Վերջին ԺՄՐԴ հրատարակեալ ցուցակը ըր անցեալ Նոյեմբեր ամսոյ 4ին ուղղած էի ձեր . . . այնուհետև որոշեալ ժամանակի համար չարունակութիւնը ընդհատել արժան դատեցի, զի Աղգային նուիրատուութեանց և քաղաքական տրոց սովորականէն աւելի առատութեան օրեր կ'յաջորդէին։

Այժմ այն դգուշաւորութիւն ընել հարկ համարած օրերս լրացած ըլլալով, ահա վերըստին ձեռք կ'առնեմ իմ քնարի թելը. և ի՞նչ հաճոյական և անուշաժպիտ էր սուրա ձայն, որ ցարդ հարիւր վաթսուն երեք հոգւոյ սրտին ներգործելով՝ ունկնադիր եղան, և խրախուսեցին զիս, զի հրաւէր մ'է իմ ձայն յարկ մի կազմելու, յորում պիտի պատապարուին օրհ-

ԾԱՆՈՒՑՄՈՒՆՔ

—

ՏԵԼԵՄԱՔ ԷՖԷՆԴԻ ԷՔՍԿՐՃԵԱՆ

Նկարչութեան և դիմադրութեան արուեստին մէջ ունեցած համբաւեալ հմտութեամբ րն ու յայտնակութեամբն հանրածանօթ Տելեմաք էֆէնդի էքսկրճեան պատիւ կը համարի ծանուցանել թէ իւր բնակութիւնն ու արուեստանոցն այս անգամ Բերայ Ֆէրիմիէ փողոց թիւ 19 տունը փոխադրած է, ուր մեծ. յաճախորդք ամեն օր առաւօտէն մինչև ի ժամ 3 և կիրակի օրերն ալ առաւօտէն մինչև երեկոյ կրնան դիմիլը դանել։

—

ԴԱՍԱՏՈՒԹԻՒՆ ԴԱՇՆԱԿԻ

Համեստուհի տիկնայք և օրիորդք, որ կը փափաքին դաշնակի դասատուութեան, կը հրաւիրուին Գում—դապու, Պաղրիարքարան փողոց թիւ 18 տունն՝ ուր ամեն Դշ. և Ուր. օրերը ժամ 5—10 աշակերտ կընդունի Օր. Զամբէուհի Ց. Թիւլպէնտճեան, որոյ հմտութիւնն արդէն հանրածանօթ է։

Գիները դիւրամատչելի են։

———

Շ· ԲՕԼ ՏԸ ԴՕԳ·

ԿԻՆ ԽԱՂ ԳԻՆԻ

Թարգմանեալ ի Դաղղիերէնէ

Հրատարակէ Կ. Ա. Պաբնեան

Կը ծախուի ամեն Հայ դրավաճառաց քով։ Գին 10 ղուրուշ։

———

ՄԵԾԱՍՊԱՏԻԻ ՄՈՒՐԱՑԿԱՆՆԵՐԸ

Գրեց Ց. Ց. Պարոնեան

Հրատարակէ Մ. Ղ. Պաբթղպանեան

Աղգային ժամանակակից վէպ մ'է, որ տեսր առ տեսր սկսած է հրատարակուիլ, երկրորդ տետրը իւրայս ընծայուած ըլլալով, կը ծախուի դրավաճառ Մ. Ղուկասեան և Ցրէնկեան դրատուններուն, սուճի Պօղոս աղայի խանութը և լրագրավաճառներու քով ի գին 40 փարայ։

ԸՆԴԱՐՁԱԿ ՕՐԱՑՈՑՑ

1884

ԹՈՒԱԿԱՆԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ

ԳԻՆ 100 ՓԱՐԱ.

—

ՅՕՐԻՆԵԼ ՅԵՐԵՄԻԱ ՓԱՀԱՆԱՅԷ ԽԱՍԳԻՒՂԻ

———

ՍԵՊՀԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ս. ՓՐԿՉԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ ՀԱՅՈՑ

———

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ

—

Պարունակութիւն

Վիճակագիր տերութեանց. — Հայրապետութիւն Հայոց. — Հայաստան աշխարհ կամ Արմենիա. — Օսմանեան միջազգային թղթատարութիւնք. — Ժամանակագոյց սուրհանդակաց Օսմանեան միջազգային թղթատարութեանց. — Եւրոպական նամակատունք ի Կ. Պոլիս. — Յաւելուած դնոց թղթատարութեանց և հեռագրութեանց Եւրոպական և Ասիական քաղաքաց Թուրքիոյ. — Սակագին հեռագրի ըստ նոր կարգադրութեանց միջազգային թելերու. — Ընկերութիւնք չոգեշարժ նաւարկութեան, ինչպէս են, Եգիպտական (Խեդիվիյէ). — Մախսուսէ. — Աւստրօ-Հունգար Լոյտ, — Մէսաժըրի Մարիթիմ. — Բաքէ էնէ և ընկերութիւն. — Ռուսական ընկերութիւն. — Ընտանեկան դեղարան։

———

ԱՐՏՕՆԱՏԷՐ	ԹՄԲԱԳԻՐ
Հ. Ե· ԴԻՄԱՔՍԵԱՆ	Մ· ԳԱՓԱՄՃԵԱՆ

———

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԻՓԱՅԷԼ ՍԱՐՔԵԱՆ
Մէրման չարչի Բիւշուի կֆ. խանի տակ թիւ 20

ԾԱՆՈՒՑՄՈՒՆՔ

ԱԶԳ

Պալը-Բէսէրի Ազգային դպրոցին համար Ձայնագրութեամբ հանգերձ երաժշտութեան հմուտ դասատու մը կուզուի դոհացուցիչ ամսականաւ, նոյնպէս Միխալըճի Ազգ. դպրոցին համար Տաճկերէն և փոքր ի շատէ Հայկաբանութեան հմուտ դասատու մը կուզուի, ուղղակի կ'հրաւիրուին դալ խմբագրութենս դրասենեակը։

—o—

ՆՈՐ ԶՐԱՑԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ՄԱՐԻՈՆ ՏԷ ԼՈՐՄԻ

ԽՈՍՏՈՎԱՆԱՆՔԸ

ԿԱՄ

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԱՐՓԱՆՔ

ԹԱՐԳ. Գ. ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ

Սոյն դեղեցիկ վէպին չորրորդ հատորն ալ իմիրէն հասած ըլլալով կը ծախուի Եէնի-ճամի Չիլինկիրլէր ճատէսի Թիւ 2 Ս. Ղուկասեան դրատունը և ուրիշ գրավաճառաց քով։ Գին 2 ֆրանք։

—o—

ԽՈՐՀՐԴԱՒՈՐ ԿՂԶԻ

ԸՆԿԵՑԻԿ ՄԱՐԴԸ

Թիւլ վէրն անուանի հեղինակին սոյն հետաքրքրաշարժ և հրահանգիչ գործին երկրորդ հատորն ալ Իզմիրի Տետէեան եղբարց տպարանէն հասած ըլլալով, կը ծախուի Եէնի-ճամի Չիլինկիրլէր ճատէսի Թիւ 2, Ս. Ղուկասեան դրատունը և ուրիշ գրավաճառաց քով. գին 2 ֆրանք։

—o—

ԽՈՈՀՐԴԱՒՈՐ ԿՂԶԻ

ԿՂԶԻՈՑՆ ԳԱՂՏՆԻՔԸ

ԹԱՐԳ. Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

Սոյն ընտիր գործին երրորդ, այն է վերջին հատորն ալ իզմիրի Տետէեան եղբարց տպարանէն հասած ըլլալով, կը ծախուի Եէնի-ճամի Չիլինկիրլէր ճատէսի Թիւ 2 Ս. Ղուկասեան դրատունը և ուրիշ գրավաճառաց քով։ Գին 2 ֆրանք։

—o—

ՏՕՐ ՋԸՐՀՃԵԱՆ

Պատիւ կ'համարի ծանուցանել Աբդոյ հասարակութեան որ բաց ի Կիւրակէ օրերէն՝ ամեն օր կէս օրէն մինչեւ ժամ 9 կ'գտնուի Աքսարայ Վալիտէ ճամիին դէմ 147 Թիւ բնակութիւնն։

Այք՝ երկուշաբթի, Չորեքշաբթի եւ Ուրբաթ օրերն, իսկ կանայք՝ Երեքշաբթի, Հինգշաբթի եւ Շաբաթ օրերն կ'ընդունուին. եւ ուր իրեն դիմող պարոններն ալ ձրիապէս կ'դարմանուին։

—o—

ՍՈԿՐԱՏԻ ՈԳԻՆ

ՐՕՍԻ ՏԷ ՃԻՒՍՓԻՆԵԱՆ

Ոգեկանութեան (Սբեըրիթիզմ) վրայ գրուած սոյն կարևոր գրքույկը, որ Պ. Ճ. Սըվաճեանէ թարգմանուած և իզմիրի Աչըլայ Աբրապեանի տպարանէն ի լոյս ընծայուած է, կը ծախուի Եէնի-ճամի Չիլինկիրլէր ճատէսի Թիւ 2, Ս. Ղ. և Եաղմաճեան դրատունլ և ուրիշ գրավաճառաց քով գին 25 սանթիմ

—o—

ԹԻՄԱՒՐՈՄԻ

ԲԱՐՈՅԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Ս.յս պատուական գիրքը այս անգամ չը նորհիւ Գեղ.-Խորէն Եպիսկոպոսի Մխիթարեան դրաբառէն համառօտութեամբ աշխարհաբար թարգմանուելով Իզմիրի Տետէեան եղբարց տպարանէն ի լոյս ընծայեալ մաքուր տպագրութեամբ, յուսալի է որ այս անմահ գործ մեծ ընդունելութիւն պիտի գտնէ Ազգ. վարժարաններէն և ընթերցասէր հասարակութենէն։

Գիրքը կազմեալ 316 երեսէ բաղկացած ըլլալով կը վաճառի Եէնի-ճամի Չիլինկիրլէր ճատէսի Թիւ 2 Ս. Ղ. և Եաղմաճեան դրատունը և ուրիշ գրավաճառաց քով։

Գին 3 ֆրանք

ՏԻՐ—ԽՄԲԱԳԻՐ
ՀՄԱՅԵԱԿ Ե. Վ. ԴԻՄԱՔՍԵԱՆ

Ի ՏՊԱՔՐԱՆՆԻ ՀԱՑԱՍՏԱՆԵՑԵՑՈՑ
Կ. Գօլիս եէնի-Գաբու Գումսալ փողոց թիւ 200